«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Հաստատություն՝ Աշտարակի 3 <<Հովիկ>> մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Թումանյան Լիլիթ Մաքսիմի

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……...3

Տեսական մաս

Բաժին 1.Երեխայակենտրոն ուսուցում……4

1.1. Ինտեգրված ուսուցում……...8

Գործնական մաս

Բաժին 2. Հետազոտական աշխատանքի նպատակը, խնդիրները, ընթացքը…..11

2.1 Ինտեգրված պարապմունքի պլան- կոնսպեկտ……11

Եզրակացություն……..18

Գրականության ցանկ……..19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր օրերում մեծ է մանկավարժի կատարած աշխատանքը: Մանկավարժը կոչված է իրականացնելու մի շարք մասնագիտական գործառույթներ: Այդ գործառույթներից կարևորվում է ուսումնական պարապմունքների կազմակերպումը մանկավարժական գործընթացում: Դրանց շնորհիվ երեխաները ձեռք են բերում այնպիսի գիտելիքներ ու հմտություններ, որոնք չեն կարող յուրացնել ազատ գործունեության ընթացքում:

Նախադպրոցական կրթության հիմնական նպատակն է ապահովել երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը: Այս նպատակին հասնելու ուղիներից է մանկապարտեզում ուսումնառությունը ինտեգրված պարապմունքների միջոցով կազմակերպելը: Նախադպրոցական կրթության մեթոդական կարևոր ուղղություններից է ինտեգրված պարապմունքների անցկացումը մանկապարտեզի մանկավարժական գործընթացում: Ինտեգրված պարապմունքները նպատակաուղղված են տարբեր մեթոդիկաների միջև կապերի դրսևորմանը, առարկաների կամ երևույթների համակողմանի ուսումնասիրմանը, գիտելիքների համակարգվածությանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը: Ինտեգրված պարապմունքը ուղղված է որոշակի թեմայի ամբողջական բացահայտմանը գործունեության տարբեր ձևերի կիրառմամբ՝ խաղ, աշխատանքային գործունեություն, կերպարվեստային գործունեություն, պարապմունքներ: Ինտեգրված պարապմունքների կառուցվածքային կողմը պահանջում է նյութի հստակություն և տարբեր մեթոդիկաների միջև տրամաբանական կապի ապահովում:

ԲԱԺԻՆ 1.

ԵՐԵԽԱՅԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Մանկավարժությունը համեմատաբար երիտասարդ գիտություն է: Այն զարգացման բուռն շրջան է ապրում 18-20-րդ դդ, ինչը նպաստում է նաև մանկավարժի մասնագիտության ձևավորմանը: Մանկավարժությունը զարգանում է երկու ուղղությամբ՝ աճող սերնդի դաստիարակության, ուսուցման և կրթության: Դաստիարակության գործընթացը լրամշակվում և կատարելագործվում է անձնային հատկությունների ձևավորման եղանակների վերանայման և վերակառուցման ճանապարհով: Ուսուցման գործընթացը զարգանում է երեխաներին գիտելիքներ փոխանցելու, նրանց մտածողությունն ու ստեղծագործական ընդունակությունները լավագույնս զարգացնելու օպտիմալ ուղիների մշակման և կատարելագործման ուղղությամբ: Մանկավարժության նշված հիմնարար գործընթացները մանկավարժական գործունեության պրակտիկայում կազմակերպվում և իրականացվում են միասնաբար և կոչված են ապահովելու յուրաքանչյուր երեխայի կրթությունն ու զարգացումը: Այսպիսով, մանկավարժությունն իր մեջ ներառում է երեխայի անձնային զարգացմանը նպաստող դաստիարակության և ուսուցման առանձին, միևնույն ժամանակ սերտ կապված տեսությունների և դրանց հիման վրա կառուցվող դաստիարակության և ուսուցման մեթոդիկաներ: Մանկավարժությունը հանդես է գալիս որպես գիտություն և արվեստ և օգտագործվում է երկու նշանակությամբ:

-Գիտական աշխարհաճանաչման բնագավառ, գիտություն,

-Մարդկային պրակտիկ գործունեություն, մարդկային փորձի փոխանցման մանկավարժական արվեստ:

<<Նախադպրոցական մանկավարժությունը տարիքային մանկավարժության առաջին օղակն է, որն ուսումնասիրում է նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման, դաստիարակության և ուսուցման օրինաչափություններն ու առանձնահատկությունները>>:[1]

[1] Տե՛ս Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան <<Նախադպրոցական մանկավարժություն>>, էջ 66

Դաստիարակության ընթացքում երեխան սովորում է ինքնուրույն ճանաչել աշխարհը, ձեռք է բերում որոշակի դիրքորոշում իր և շրջապատող մարդկանց հանդեպ: Դաստիարակության հետ դիալեկտիկ կապի մեջ է ուսուցումը: Ուսուցումը մանկավարժի և երեխայի ակտիվ փոխներգործության յուրահատուկ ձև է, որի արդյունքում յուրացվում են գիտելիքներ, ձևավորվում կարողություններ և հմտություններ, զարգանում են երեխայի ընդունակությունները:

<<Ուսուցման գործընթացը փոխներգործություն է, որի արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական հաղորդակցման ոճով, երեխաների և մանկավարժների փոխհարաբերություններով>>:[2]Հաղորդակցման ոճը բխում է հասարակության կողմից ներկայացվող պահանջներից, կրթական համակարգի ռազմավարությունից և գերակա խնդիրներից: Հասարակության զարգացման ժողովրդական սկզբունքների հաստատման ճանապարհին զգացվեց ուսուցման նոր մոդելի անհրաժեշտությունը: Այն դարձավ ժամանակի պահանջ: Ետ մղվեցին մանկավարժական հաղորդակցման ինքնիշխան (ավտորիտար) և հարմարվողական (լիբերալ ոճերը), որոնց համապատասխանում էին ուսուցման ուսումնակարգապահական և հրահանգային մոդելները:

Բնականաբար, կառուցվող ժողովրդավարական հասարակությունը պիտի նախընտրեր մանկավարժական հաղորդակցման ժողովրդական (դեմոկրատական) ոճը և վերանայեր ուսուցման կազմակերպման եղանակը:

Դեմոկրատական հաղորդակցման ոճին համապատասխանում է ուսուցման անհատակողմնորոշիչ մոդելը: Ուսուցման անհատակողմնորոշիչ մոդելի հիման վրա կառուցվում է մանկավարժական տեխնոլոգիա, որի հիմնական ուղղություններն են.

. երեխայի ակտիվ մասնակցության ապահովումը ուսումնառության գործընթացին՝ ուսուցման փոխգործուն մեթոդների կիրառման միջոցով,

. երեխաների հետ երկխոսության և համագործակցության հաստատումը (նախկինում մենախոսություն էր),

. փոխըմբռնման մթնոլորտի ստեղծումը, որի արդյունքում ուսուցումը կառուցվում է ոչ թե ցուցադրումների և բացատրությունների, այլ երեխայի նախասիրությունների և հետաքրքրությունների ուսումնասիրության և հաշվառման հիման վրա,

[2] Տե՛ս Հ. Միտոյան, Լ. Սմբատյան <<Ուսումնական ձեռնարկ>>, էջ 177:

. ուսուցման զարգացնող ուղղվածության ապահովումը երեխաների ինքնուրույն փորձարարական գործունեության կազմակերպմամբ,

. ուսուցման ընթացքում երեխայի ինքնակառավարման, սկզբունքների հաստատումը (նախկինում ուսուցումը կառավարվում էր մանկավարժի կողմից),

. ուսուցման իրականացումը համատեղ գործունեության ընթացքում, ուր և' երեխան, և' մանկավարժը նույն հարթության մեջ են և գործունեության սուբյեկտների դերում: Մանկավարժը խորհրդատու է, օգնական, ավագ ընկեր, այլ ոչ թե թելադրող:

Ուսուցման ընթացքում հնարավոր են ուսուցման խնդիրների առաջադրման և լուծման տարբեր եղանակներ, որոնք դիդակտիկայում հայտնի են որպես ուսուցման տեսակներ: Ժամանակակից դիդակտիկայում մշակվում է ուսուցման նորոնոր տեսակներ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել 3 խմբի՝

պրոբլեմային (խնդրահարույց) ուսուցման,

միջնորդված ուսուցման:

Դրանք կարող են օգտագործվել նաև համատեղ՝ որևէ տեսակի գերակայությամբ: Ուսուցման տեսակի ընտրությունը պայմանավորված է դիդակտիկ խնդրի բովանդակությամբ:

Ուղղակի (ավանդական) ուսուցման ընթացքում դիդակտիկ խնդիրը երեխաներին առաջադրում է մանկավարժը՝ բացատրա-ցուցադրական եղանակներով, որի արդյունքում երեխաների կողմից ձեռք են բերվում <<պատրաստի>> գիտելիքներ և հմտություններ:

Պրոբլեմային ուսուցման հիմքում ընկած է երեխայի ուսումնահետազոտական-որոնողական գործունեությունը: Նրան չեն փոխանցում պատրաստի գիտելիքներ, այլ առաջարկվում են պրոբլեմային տարբեր իրադրություններ: Արդյունքում՝ երեխան ինքն է փնտրում, գտնում, ինքնուրույն ձեռք բերում գիտելիքներ և կարողություններ: Պրոբլեմային ուսուցման առավելություններն են.

. երեխան հանդես է գալիս մեծահասակներից անկախ, ինքնուրույն սովորողի դերում,

. երեխայի գիտելիքներն ու կարողությունները ձևավորվում են ինքնուրույն որոնողական գործունեության ընթացքում՝ պրոբլեմային խնդրի լուծման միջոցով,

. պրոբլեմային ուսուցման համագործակցային բնույթը,

. այն նպաստում է համատեղ, փոխադարձ ուսուցմանը և ինքնուսուցմանը,

. նպաստում է բարձրաձայն հարցադրումներին, մտքերի, կարծիքների ազատ արտահայտմանը և փոխանակմանը,

. խթանում է երեխաների ոչ միայն մտածական, այլև իմացական գործունեությանը:

Պրոբլեմային ուսուցման արտասահմանյան մոդելների հիմքում ընկած է Ժան Պիաժեի կողմից սահմանված կառուցողականության (կոնստրուկտիվիզմի) սկզբունքը, ըստ որի երեխան տարիքային ցանկացած փուլում ընդունակ է ինքնուրույն կառուցելու սեփական գիտելիքները: Դրա հետ մեկտեղ, սակայն, պրոբլեմային ուսուցման գործընթացը երկարաժամկետ է, հնարավորություն չի տալիս հստակ գնահատել երեխայի անհատական առանձնահատկությունները և որոշել նրան ներկայացվող պրոբլեմային խնդրի բարդության աստիճանը:

Միջնորդված ուսուցման էությունը զարգացնող միջավայրի կառուցման մեջ է, որը դառնում է ուսուցման միջնորդ: Զարգացնող միջավայրն իր մեջ պարունակում է դիդակտիկ նյութեր, ուսուցանող հետաքրքրաշարժ գրքեր, տեսաֆիլմեր և այլ միջոցներ: Զարգացնող միջավայրն ապահովում է զարգացման հավասար պայմաններ, ինչը նպաստում է երեխաների համագործակցությանը: Մանկավարժը հանդես է գալիս խորհրդատուի դերում: Միջնորդված ուսուցման հիմնական նշանաբանն է. <<Սովորեցիր ինքդ, սովորեցրու' ընկերոջդ>>: Միջնորդված ուսուցման տեսակ է ծրագրավորված ուսուցումը, օրինակ՝ համակարգչային ուսուցումը:

Ժամանակակից նախադպրոցական դիդակտիկան հիմնավորում է ուսուցման նշված տեսակների զուգորդման տարբերակը, որը ենթադրում է զարգացնող միջավայրի ապահովում և ակտիվ ուսուցման մեթոդների կիրառում: Ուսուցման տեսակների զուգորդումը անհատակողմնորոշիչ հաղորդակցման պայմաններում ձևավորում և կյանքի է կոչում ժամանակակից դիդակտիկայի հիմնական կարգախոսը, այն է. <<**Սովորեցնել սովորել**>>: Ուսուցման գործընթացը մանկապարտեզում կազմակերպվում է երեք հիմնական ձևերով: Ուսուցման կազմակերպման ամենատարածված ձևը պարապմունքն է: Այսօր առավել արժեքավոր են համալիր պարապմունքները, որոնց ընթացքում դիդակտիկ խնդիրները լուծվում են, երեխաներին ներգրավելով գործունեության տարբեր ձևերի մեջ: Մշակվում են նաև ինտեգրված պարապմունքներ, որոնց ընթացում երեխային ներկայացվում են նույն դիդակտիկ նպատակին ծառայող գիտելիքներ՝ տարբեր ոլորտներից:

Ուսուցման կազմակերպման բավականին արդյունավետ ձև է էքսկուրսիան, որը նախապես պլանավորվում և անցկացվում է հատուկ մեթոդիկայով: Ուսուցանող էքսկուրսիան, ինչպես և պարապմունքը, բաղկացած է երեք մասից՝ նախապատրաստական, հիմնական, ամփոփող: Ուսուցման կազմակերպման արդյունավետ ձև է դիդակտիկ խաղը, որն աստիճանաբար փոխարինելու է պարապմունքների ձևով կազմակերպվող ուսուցմանը:

Ուսուցման գործընթացը շարունակվում է նաև պարապմունքներից և դիդակտիկ խաղերից դուրս՝ ազատ ժամանցի, հանդեսների, տոնակատարությունների, զբոսանքների և խաղերի ընթացքում: Ուսուցման կազմակերպման ավանդական ձևերը պարբերաբար կատարելագործվում են և մշակվում: Ատիճանաբար մանկապարտեզ են մուտք գործում ուսուցման կազմակերպման նոր ձևեր: Դրանցից են՝

Մտավոր խաղերը,

Խաղ-բանավեճերը,

Խաղ- մրցույթները:

1.1 ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Նախադպրոցական կրթության կարևոր նպատակներից է երեխաների մեջ սերմանել և մշակել այնպիսի որակներ ու հատկություններ, ինչպիսիք են՝ քննադատական մտածողությունը, հետաքրքրասիրությունը, անմիջականությունը, զարմանքը, երևակայությունը և աշխատանքից էսթետիկական հաճույք ստանալը: Բոլոր երեխաներն ունեն այս հատկանիշները փոքր հասակում, բայց, հաճախ կորցնում են դրանք կյանքի առաջին տասնամյակում: Մինչդեռ, այս հատկությունները կարևոր դեր են խաղում սովորելու գործընթացում: Այս նպատակին հասնելու ուղին ուսումնառությունը թեմատիկ դասերի միջոցով կազմակերպելն է: Թեմատիկ պարապմունքները կարևորում են գործունեության այն ձևերը, որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնություն, համագործակցություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում:

Թեմատիկ ուսուցումն ապահովում է երեխայի զարգացման մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և էսթետիկական ոլորտների

համակողմանի զարգացումը և չի կենտրոնանում մեկ՝ առանձնացված ոլորտի վրա, որն անբնական կլիներ երեխայի զարգացման համար: Բազմակողմանի զարգացած, ուսման մեջ հաջող երեխաները մեծանում են հոգատար, աջակցող միջավայրում: Թեմատիկ դասերի ժամանակ դաստիարակը գիտակցաբար այնպես է անում, որ երեխաները զգան մեծահասակների հոգատարությունը, երեխաների ուսումով նրանց շահագրգռվածությունը: Դաստիարակները, նրանց օգնականները և ծնողները սովորելու ընթացքում զրուցում են երեխաների հետ՝ նրանց ուշադրությունը կենտրոնացնելով նյութի բովանդակության վրա: Նրանք զարգացնում են երեխաների մտածողությունն աստիճանաբար ավելի ծավալուն և անկեղծ դարձող երկխոսությունների միջոցով: Այսպիսի մթնոլորտը զարգացնում է երեխաների մտավոր և լեզվական ունակությունները և ինքնավստահություն է ներշնչում նոր ձեռք բերած գիտելիքները կիրառելու համար:

Թեմատիկ ուսուցումից բոլորն էլ շահում են: Ծնողները ներգրավվում են խմբում կատարվող տարբեր աշխատանքների մեջ և տեղյակ են, թե ինչ են անում իրենց երեխաները: Դաստիարակներին ոգևորում է դասերի նոր բովանդակությունը և նոր մեթոդներ կիրառելու համար ստեղծված գրավիչ հնարավորությունները: Երեխաներն, իրենց հերթին համարվում են գիտակ, ինքնատիպ մտածողներ, որոնց թույլ է տրվում նոր ձևերով դրսևորել իրենց գիտելիքները: Երբ այսպիսի համալիր ուսուցումը մանրակրկիտ կերպով պլանավորվում և իրականացվում է, արդյունքում դրսևորվում են երեխաների հետևյալ հատկանիշները.

. հոգատար են միմյանց նկատմամբ,

.հետաքրքիր մտավոր կապեր են ստեղծում,

.կատարելագործում են իրենց շփման և երկխոսության հմտությունները,

.ձևավորում են որպես համայնք:

Թեմատիկ ուսուցումը ենթադրվում է ուսումնական ծրագրի տարբեր բաժինների միավորում՝ մեկ հետաքրքիր գաղափար ուսումնասիրելու միջոցով, որի մեջ ամփոփված են առարկաներից բովանդակային միավորներ: Թեմատիկ ուսուցման ծրագիրն այնպես է կազմված, որ երեխաները տեսնում և հասկանում են առարկայական ոլորտների միջև եղած կապերը և նրանց կապը կյանքի հետ:

Թեմատիկ ուսուցումը հնարավորություն է տալիս դաստիարակին՝ ծրագիրը կազմակերպել երեխաների համար հետաքրքրություն ներկայացնող թեմաների, խնդիրների կամ կենսական հարցերի շուրջ: Թեմատիկ ուսուցումը միջառարկայական է, ինչպիսին որ ինքը՝ կյանքն է: Այս փաստը երեխաների համար անմիջապես նշանակալի է դառնում, երբ լուծելու համար նրանց է

ներկայացվում մի <<իսկական>> խնդիր, կամ էլ ուսումնասիրության ենթակա մի նոր գաղափար:

Ուսումնասիրվող թեմայի կամ ծրագրի մեջ երեխայի հետաքրքրություններին կենտրոնական տեղ հատկացնելը ապահովում է երեխաների շահագրգռվածությունն ու հետաքրքրասիրությունը: Թեմատիկ պարապմունքի ծրագրման ժամանակ դաստիարակը պետք է հաշվի առնի հետևյալ հարցերը

. արդյո՞ք թեման համապատասխանում է երեխաների հետաքրքրություններին,

. նպաստո՞ւմ է այն երևակայության ու ստեղծագործական մտքի խթանմանը,

. հնարավո՞ր է ընտրված թեման անցնել այնպես, որ ապահովի բազմամակարդակ մասնակցությունը, և, միաժամանակ, յուրաքանչյուր երեխայի գործադրած ջանքը պսակվի հաջողությամբ,

. երեխաները հնարավորություն կունենա՞ն համագործակցվելու և որոշակի պատասխանատվություն կրելու,

. կարո՞ղ են նրանք ավելացնել իրենց գիտելիքները և փորձը՝ առարկաների, մարդկանց և իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

Թեմատիկ ուսուցում

. Հետազոտվում է ընդարձակ և կարևոր թեմա,

. համապատասխանում է ուսումնական ծրագրի նպատակներին,

Շեշտը դրվում է երեխաների զննումների և հետազոտությունների վրա՝ երկարատև և խորը,

. կապված է ունեցած փորձի հետ և համապատասխանում է այդ փորձին,

. ապահովում է ծրագրի միջառարկայական կապը,

. օգնում է նյութը վերակառուցելու և ներկայացնելու,

. խրախուսվում է երեխայի ինքնուրույն աշխատանքը,

. խրախուսվում է գիտելիքի կիրառումը,

. նպաստում է անհատականացմանը,

.նպաստում է ընտանիքի մասնակցությանը:

ԲԱԺԻՆ 2.

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ: Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել ինտեգրված ուսուցման արդյունավետությունը կրթադաստիարակչական աշխատանքները կազմակերպելիս:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Հետազոտության խնդիրներն է ուսուցման ինտեգրված մեթոդի բացահայտումն ու արդյունավետությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ: Հետազոտական աշխատանքը կատարել ենք ավագ տարիքային խմբում: Ստորև ներկայացնում ենք ինտեգրված պարապմունքի պլան-կոնսպեկտ:

2.1.<<Խոսքի զարգացում և էկոլոգիա>> ինտեգրված պարապմունքի պլան-կոնսպեկտ

Թեման՝ <<Թափոնների վերադարձը>>

Տեսակը՝ զրույց

Նպատակը՝

Կրթական- Ընդլայնել և ամրապնդել երեխաների գիտելիքները անկենդան և կենդանի բնության, բնության երևույթների, նրանց պահպանման, խնամքի մասին: Մարդը բնության մի մասն է, նա հազարավոր թելերով կապված է բնությանը:

Զարգացնող- Զարգացնել կապակցված խոսքը, ամրապնդել հիշողությունը:

Դաստիարակչական- Ձևավորել վարքագծի ճիշտ դրսևորում շրջակա միջավայրի նկատմամբ: Բնության պահպանումը յուրաքանչյուրի պարտքն է:

Նախապատրաստում՝ զրուցել բնության երևույթների, կենդանի և անկենդան բնության կապի մասին: Շաբաթվա ընթացքում հավաքել թափոններ և տեսակավորել:

Անհրաժեշտ պարագաներ՝ բնության երևույթներ պատկերող նկարներ, թափոններ, սոսինձ, մկրատ պլաստիլին:

Ընթացքը՝

Խթանման փուլ

Ընթերցել բանաստեղծություն՝ Աթ. Խնկոյան <<Տարվա եղանակները>>՝

Թե գարուն է նախշուն-նախշուն,

Նա ինչե՞ր է մեզ բաշխում,

-Ծիլ ու ծաղիկ, կանաչ խոտ,

Ալ ու ալվան վարդ շաղոտ:

Թե ամառ է, շոգ ամառ,

Ի՞նչ է բերում մեզ համար,

Ցորեն, գարի ու հաճար՝

Ամեն հոգսի դեղ ու ճար:

Թե աշուն է պտղաբեր

Ի՞նչ է բերում մեզ նվեր,

-Նուռ, սերկևիլ, տանձ, խնձոր,

Դեղձ ու խաղող մեղրածոր:

Թե ձմեռ է ցրտաշունչ,

Ի՞նչ է թափում լուռ ու մունջ

-Փաթիլ-փաթիլ փափուկ ձյուն՝

Արծաթի պես պսպղուն:

-Տարին քա՞նի եղանակ ունի:

-Տարվա եղանակներից այժմ ո՞ր եղանակն է:

-Որո՞նք են ձմռան ամիսները:

- Հիշենք ձմռան մասին սովորած բանաստեղծությունը:

<<Ո՞ւմ հետքերն են>>

Ես ձմեռն եմ Բաբկեն, Նազիկ,

Ձյուն եմ բերել փափկամազիկ,

Դե շուտ եկեք իմ մանուկներ,

Կարոտել եմ խաղերին ձեր:

Տրորեցեք ճերմակ գույնս,

Ձնագնդի դուք խաղացեք,

Ցրիվ տվեք ճերմակ ձյունս,

Միայն թե միշտ ուրախացեք:

Իմաստի ընկալման փուլ

-Ի՞նչ է ձյունը:

-Ի՞նչ է բնության երևույթը:

-Եկեք հիշենք և նշենք բնության երևույթներ:

Ֆիզկուլտ-դադար

Քամի, փոթորիկ, տերևաթափ, անձրև, ծիածան, կարկուտ, ձյուն, ջրվեժ:

Բնությունը լինում է կենդանի և անկենդան: Դրանք սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ: Անկենդան բնության տարրերը չեն շնչում: Կենդանի բնության տարրերը շնչում են, սնվում են, աճում են, բազմանում:

Առանց օդի մարդիկ, կենդանիները և բույսերը չեն կարող ապրել: Բոլորին անհրաժեշտ է մաքուր օդ: Գործարանները, ավտոմեքենաները իրենց ծխով աղտոտում են օդը: Գործարաններում անհրաժեշտ է տեղադրել փոշի, մուր, վնասակար գազեր կլանող սարքավորումներ: Օդը մաքրում են բույսերը, դրա համար տնկում են անտառներ, ստեղծում կանաչ գոտիներ, այգիներ, որտեղ շատ ծառեր, ծաղիկներ, թփեր կան: Իզուր չեն ասում, որքան շատ անտառ, այնքան շատ թթվածին: Ծառերի, թփերի, խոտաբույսերի աճման համար անհրաժեշտ է հող: Հողի մեջ ապրում են բազմաթիվ միջատներ, թրթուրներ, անձրև, որդեր: Հողը կերակրում է մարդուն:

Մարդկանց, կենդանիներին, բույսերին, անհրաժեշտ է ջուր, առանց ջրի ոչ մի կենդանի բնություն չի լինի: Ե՛վ մարդկանց, և՛ կենդանիներին, բույսերին անհրաժեշտ է մաքուր ջուր, մաքուր օդ, մաքուր հող: Թափոնները աղտոտում և թունավորում են օդը, ջուրը, հողը, վնասակար և վտանգավոր դառնում թե՛ մարդկանց, թե՛

կենդանիների և բույսերի համար: Աղտոտված ջուրը չի կարելի խմել, ջրել բույսերը, աղտոտված գետերի և լճերի ջրերում ձկները սատկում են:

-Ովքե՞ր պետք է պահպանեն օդի, ջրի, հողի մաքրությունը և ինչպե՞ս:

-Ճիշտ վարքագծի դրսևորում բնության գրկում, շրջակա միջավայրում:

Կենդանի բնությանը անհրաժեշտ է մաքուր օդ, մաքուր ջուր, մաքուր հող: Իսկ թափոնները խելացի մարդիկ հավաքում, տեսակավորում, գործարանում վերամշակում և ստանում են նոր իրեր:

Դիտել տեսաֆիլմ: Եկեք փորձեն կյանք տալ այս թափոններին, և մաքուր պահենք միջավայրը: Աշխատանքը կատարել ենթախմբերով, ընդգրկել մեծերին:

Կշռադատման փուլ

Աշխատանքի ավարտին՝ ըստ սեղանների, ցուցադրել պատրաստի աշխատանքները, ծափահարել, խրախուսել: Երեխաների միջոցով ներկայացնել իրենց վերաբերմունքը կատարած աշխատանքի նկատմամբ:

SHINE

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում թեման, հանգեցինք հետևյալ եզրակացության.

. յուրաքանչյուր երեխա ունի որակյալ կրթություն ստանալու իրավունք,

. դաստիարակի առաքելությունն է դաստիարակել համակողմանի և ներդաշնակ զարգացած անձ,

.մանկապարտեզում ժամանակակից պահանջներին համապատասխան պարապմունքի կազմակերպումը նպաստում է պրակտիկ գործունեության կատարելագործմանը, որոնց օգնում է բովանդակալից մոտեցումը, նոր մեթոդների կիրառումը,

.ինտեգրված պարապմունքի ընթացքում տարբեր մեթոդիկաների միջև կապերի բացահայտումը նպաստեց առարկաների և երևույթների ուսումնասիրությանը,

. գործունեության այս ձևը պահանջում է ինքնուրույն մտածողություն, նախաձեռնություն, համագործակցություն, կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում,

.ինտեգրումը օգնում է տվյալ թեմայի շուրջ ձեռք բերել հիմնական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

Օգտագործված գրականության ցանկ

1. <<Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենք>>:

2. Հ. Միտոյան, Լ. Սմբատյան՝ <<Ուսումնական ձեռնարկ>>, Երևան 2010:

3. Ս. Մարության, Ա. Դալլաքյան <<Նախադպրոցական մանկավարժություն>>, բուհական դասագիրք, Երևան 2008: